

---

## ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ. ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

### ԷՎԵԼԻՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Սփյուռքում ազգապահպանության համար և ուժացման, ձուլման դեմ պայքարող ամենասկզբունքային ու նվիրյալ գործիչներից էր բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, քննադատ, հրապարակախոս և մանկավարժ Մուշեղ Իշխանը (Ճենտերեջյան): Այսօր, երբ զլորալացման, աշխարհաքաղաքական տարաբնույթ իրողությունների ու զարգացումների համատեքստում աշխարհասփյուռ հայությանը սպառնում է ազգային ինքնությունը, դիմագիծը, լեզուն ու ավանդույթները կորցնելու, ձուլվելու մեծ վտանգը, նրա երկերի լուսաբանումն ու արժենորումը դառնում են խիստ արդիական:

1936 թվականից ի վեր, երբ լույս տեսավ Մուշեղ Իշխանի առաջին ժողովածուն՝ «Տուներու երգը», Սփյուռքում նա դարձավ ամենասիրված ու գնահատված հեղինակներից մեկը, իսկ կյանքի մայրամուտին կենդանի դասական էր համարվում: Այնինչ Խորհրդային Հայաստանում բանաստեղծն իր քաղաքական կողմնորշման պատճառով արգելված ու մերժված հեղինակ էր: Լայնային ու ճշմարիտ քրիստոնյայի նկարագիր ունեցող բանաստեղծն ամենաին էլ չէր վշտանում հայրենիքում անծանոթ ու արգելված լինելու զաղափարից, քանզի հավատացած էր, որ վաղ թէ ուշ կայանալու է իր և իր ժողովրդի հոգենոր մերձեցումը. «Ես այն համոզումը ունիմ, որ ինչ որ հայրենով կզրվի, հայ ոզիով կդրվի և կմշակվի, վերջ ի վերջո հայրենիքին կպատկանի: Մերժե կամ ընդունե՝ հայրենիքինն է: Մենք բոլորս ալ հայրենիքինն ենք, արտասահմանին մեջ ըլլանք, թէ հայրենի հողի վրա, եթէ մեր վաստակը արժեք ունի»<sup>1</sup>:

Նկատենք, որ Մուշեղ Իշխանի երկերի հատընտիրն առաջին անգամ հայրենիքում լույս տեսավ միայն բանաստեղծի մահից հետո՝ 1990 թ., նրա քրոջ՝ Հուշիկ Ճենտերեջյանի ջանքերով: Ժողովածուն կազմել և առաջարանը գրել է Վ. Գարդիկյանը: 1994 թ. Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսի հովանավորությամբ Հայաստանում լույս տեսավ «Ուխտագնացություն» վերնագրով փոքրածակալ գիրքը, որի առաջարանը գրել է Հր. Թամրազյանը: Առ այսօր, թեև Մուշեղ Իշխանի ստեղծագործությունների վերաբերյալ եղել են տարբեր հրապարակումներ, հոդվածներ, Բեյրութում 1986 թ. լույս է տեսել Լեռն Վարդանի «Մուշեղ Իշխանի արձակը» մենագրությունը, սակայն սփյուռքահայ բանաստեղծի պոեզիան դեռ հաշվուր պատշաճի ուսումնասիրված չէ:

---

<sup>1</sup> Մ. Մարտիրոսյան. Հարցազրույց բանաստեղծ Մուշեղ Իշխանի հետ. – «Ազդակ» (Բեյրութ), 28. VII. 1990, էջ 6:

Իր մեծ ուսուցիչ Լևոն Շանթին նվիրված հուշագրության մեջ Մուշեղ Իշխանը գրում է. «Մարդեր կան սակայն, որոնց գործը կարելի չէ բաժնել իրենց անձեն»<sup>2</sup>. Բանաստեղծն ինքը մարդկային այդ տեսակից էր, և նրա ստեղծագործությունն իր ավրած կյանքի անմիջական արտահայտությունն է: Մուշեղ Իշխանի ողջ բանաստեղծությանը բնորոշ է այն հանգամանքը, որ ժողովածուները ստեղծվել և իրար են հաջորդում նրա կյանքի փուլերին զուգընթաց՝ ներաշխարհի հասունացման ու աշխարհայացքի զարգացման տրամաբանությամբ: Այսինքն՝ նա իր զգացմունքների, հույզերի ու ապրումների բանաստեղծական տարեզիրն է, և ժողովածուները, կարծես, դրանց ամփոփումն ու ամբողջացումն են: Ժողովածուները կազմելիս՝ Մուշեղ Իշխանը բանաստեղծությունները ի մի է բերել իր կյանքի որոշակի ժամանակահատվածում գերիշխող զգացմունքի, զաղափարի, ապրումների շուրջը՝ ընտրելով և տվյալ ժողովածուից դուրս թռղնելով դրա ամբողջությունը խախտող գործերը: Նրա ժողովածուները բանաստեղծական արտահայտությունն են իր սերնդի ապրումների ու տագնապների և, ասես, պատգամներ են հղված աշխարհի «զրու ծագերում» դեգերող հայ մարդուն. նախ, հայ լեզվով կերտիր քո ոզու տունը, քարը դիր քարին ու կառուցիր նրա ապաստանը անհուն տիեզերքում («Տուներուն երգը», 1936 թ.), ապա բորբոքիր մոխիրներում անթեղված կրակը, վառիր օշախտ («Կրակ», 1938 թ.), կյանքը որպես երազ ապրիր ու երազ՝ որպես կյանք («Երազ և կյանք»), ընդունիր կյանքի պարզեները («Ողջույն քեզ կյանք», 1958 թ.), դարձյալ ետ նայիր ու հաշտվիր, որ կյանքը տառապանք է («Տառապանք», 1968 թ.), արարիր, պտղավորվիր և քո ոսկի աշնանը, քո հասկաքաղին բաժանիր բարերեր պտուղներդ («Օսկի աշուն», 1968 թ.), ու քո հրաշալի մայրամուտին զիտակցիր, որ մահն ընդամենք վերադարձ է դեսպի նախնականը («Արևամար», 1986 թ.): Նրա վերջին՝ «Իրիկնալույս ոռութերու տակ», ժողովածուն լույս տեսավ մահից հետո՝ 1991 թ.:

Մուշեղ Իշխանն ապրեց, հարազատ ու անդավաճան մնալով իր էությանը, իր կոչումին, գրեց իր կյանքի վեպերը՝ «Հացի և լուսի համար» (1951 թ.), «Հացի և սիրո համար» (1956 թ.), «Մնաս բարով մանկություն» (1974 թ.), «Սպասում» (1976 թ.), թատերգությունները՝ «Մեռնիլլը որքան դժվար է» (1971 թ.), «Սառնարանեն ելած մարդը» (1973 թ.), «Կիլիկիո արքան», «Փոստալ» (1975 թ.), «Մարդորսը», «Ժամադրությունը» (1976 թ.), «Պարույր Հայկազն և Սովուն Խորենացի» (1978 թ.), «Ցուցափեղին աղջիկը» (1980 թ.): Բանաստեղծի անկեղծ զգացմունքները միշտ ներդաշնակեցին իր երազանքներին, համոզմունքներին, զաղափարներին ու դարձան բանաստեղծություն. «Սիթե լավագուն պատմությունը, դուք բսեք՝ վեպը յուրաքանչյուր անձի կյանքը չէ արդեն»<sup>3</sup>:

Մուշեղ Իշխանը ծնվել է 1914 թ. Թուրքիայի Անկարայի նահանգի Սիվրիհիսար գյուղադաշտում: 1915-ին բազում հայ ընտանիքների նման ճենտերեճյանների գերդաստանը տարագրվում է: Սակայն նրանց հաջողվում է փախուստի տարիներն անցկացնել ծննդավայրից ոչ շատ հեռու: Մուշեղի հորը թուրքերը դաժանորեն ծեծում են, և նա մեռնում է տարագրության մեջ: Որոշ ժամանակ անց ընտա-

<sup>2</sup> Մ. Բ 2 իւ ա ն. Իմ ուսուցիչներս, Բեյրութ, 1984, էջ 106.

<sup>3</sup> Մ. Բ 2 իւ ա ն. Մնաս բարով մանկություն, Սոնիքալ, 1990, էջ 6:

նիքքը վերադառնում է Սիվրիկիսար: Սակայն ոչխարաբույժ, բրոի վաճառական Ճենտերեճյանները կորցրել էին և՝ ունեցվածքը, և մարմարե աստիճաններով երկհարկանի տունը. «Կը տեղավորվինք շատ ավելի անշուրք բնակարան մը, վերի թաղին մեջ, բլուրին ստորոտը: Հայու տուն է: Այնքան հայու տուներ կան լրված, դատարկ և անտեր...»<sup>4</sup>: Թուրքերը մի զիշեր տանում են նաև հորեղբորք: 1918-ին դարձյալ փախուստ նոր ջարդերից: Ընտանիքը հաստատվում է Պուրսա քաղաքում: Երբ հունական գորքը նահանջում է, հայերը փախչում են դեպի Կեմիլիկ նավահանգիստ: Երկար, տառապազին սպասումներից հետո, ականատես լինելով ողբերգական տեսարանների, ի վերջո, հատուկ զաղթականներին տեղափոխելու համար եկած նավով նրանք մեկնում են Պոլիս: Մի քանի ամիս Պոլսում մնալուց հետո՝ մի այլ նավով մեկնում են Բեյրութ, ապա՝ Դամասկոս:

Թեև Սուշեղը ծնողների առաջնեկն էր, ի սկզբանե, հոր նախաձեռնությամբ նրան որդեգրել էր ավագ եղբայրը, որը զավակ չէր ունենում: Ճակատազիր էր երեխ՝ երկատված էր նրա գոյությունը, հոգին: Նա երկու մայր ունեցավ, երկու հայրենիք: Հարազատ մայրը եղբոր՝ Գևորգի և քրոջ՝ Հովհաննիկի հետ Դամասկոսից մեկնեց Հունատան, այնտեղից էլ Խորհրդային Հայաստան. «Այսպես վերջացավ մեր կյանքին ներքին տռամբ: Հիմա եղբայրս և քոյրս ընտանիք կազմած՝ կապրին մայր հայրենիքին մեջ, իսկ ես Սփյուռքի զավակ եմ: Նորեն երկու մայր և երկու վիճակ՝ նույն արյունը կրող հարազատներու համար: Այս անզամ տռամբ ընտանեկան չէ, այլ ազգային»<sup>5</sup>:

Գաղթի այս երկար ճանապարհին Սուշեղը բազմաթիվ դպրոցներ է փոխում՝ Պոլսի Օրթազյուղի վարժարանը, Դամասկոսի հայ բողոքականների վարժարանը, արարական վարժարանը, որ կոչվում էր «Սեռոերու» դպրոց, ֆրանս-հայկական վարժարանը: Ի վերջո, Սուշեղն ավարտում է Դամասկոսի ազգային վարժարանը: Արհեստ ձեռք բերելու մի քանի անհաջող փորձեր է կատարում: Իր վարպետի՝ կոշկակար Վարդանի ազդեցությամբ համալրում է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության շարքերը, տնօրինում է կուսակցության գրասենյակի գրադարանը: Շուտով նա Դամասկոսում քննություններ է հանձնում և ընդունվում է Սփյուռքում մեծ համբավ վայելող Կիպրոսի Մելքոնյան վարժարան: 1928 թ. Ս. Իշխանը մեկնում է Կիպրոս: Աշակերտում է ժամանակի մեծ քննադատ, գրող Հակոբ Օշականին: Բանաստեղծն իրեն բախստավոր է համարում. նրա ուսուցիչները եղել են այնպիսի մեծ անհատականություններ, հայ մշակույթի այնպիսի նվիրյալներ, ինչպիսիք էին՝ Լևոն Շանթը, Նիկոլ Աղբայանը, Կոստան Զարյանը, Նիկողայոս Աղռնցը, Սիմոն Վրացյանը, Վահան Թեքեյանը: Նրանցից յուրաքանչյուրը, լինելով բացառիկ, անկրկնելի անհատականություն, ժամանակի հայ հոգևոր կյանքի ջահակիրը, իրենց զորավոր ազդեցությունն են թողել բանաստեղծի աշխարհայացքի ձևավորման, մարդկային ու բանաստեղծական նկարագրի վրա: Հետազայում Սուշեղ Իշխանն իր գունագեղ ու տպավորիչ վրձնով կերտում է ուսուցիչների դիմանկարները «Իմ ուսուցիչներս» գրքում, որը լույս է տեսել 1984 թ.:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 177:

1930 թ. դպրոցական արձակուրդներին Մուշեղը վերադառնում է Բեյրութ: Կիսատ թողնելով ուսումը Մելքոնյան վարժարանում՝ նա ընդունվում է Լեռն Շանթի և Նիկոլ Աղբայյանի կողմից նոր բացված Համազգայինի հայ ճեմարան: Հինգ տարի սովորում է այդ ճեմարանում, ապա որպես ուսուցիչ՝ աշխատում նույն հաստատությունում: 1938 թ. Մուշեղ Իշխանը մեկնում է Բելգիա և երկու տարի ուսանում Բրյուսելի համալսարանի մանկավարժության ու գրականության բաժիններում: Միաժամանակ մասնակցում է այդ համալսարանում Աղոնցի հիմնադրած հայագիտական ամբիոնի դասընթացներին:

Սկսվում է երկրորդ համաշխարհային պատերազմը. Մուշեղը ստիպված էր վերադառնալ Բեյրութ և դարձալ դասավանդել հարազատ կրթօջախում: Նա իր ողջ կյանքը նվիրում է Սփյուռքում հայ երեխաներին հայեցի դաստիարակելու ազնիվ գործին: Մինչև իր մահը՝ 1990 թվականը, Մուշեղ Իշխանը ճեմարանում դասավանդում է հայոց լեզու և գրականություն, մանկավարժություն, հոգեբանություն առարկաները, երկար տարիներ վարում է նաև ճեմարանի փոխտնօրենի պաշտոնը: Այդ տարիներին նա գրում է «Արդի հայ գրականություն» եռահատոր դասագիրքը:

Տասը տարի՝ 1941–1951 թթ., նա խմբագրել է «Ազդակ» օրաթերթը: Հանդես է եկել հրապարակախոսական հոդվածներով, մանկավարժությանն ու գրականությանը, սփյուռքահայության խնդիրներին վերաբերող բազում հրապարակումներով:

Իր «Հայաստան» պոեմում, որը լրաց էր տեսել 1946 թ., Իշխանն իրեն համեմատում է ի ծնե այն «սևեռաբիր» կույրի հետ, որն ապրում է իր չտեսած այգաբացով: 1962 թ. բանաստեղծին բախս վիճակեց վերապատրաստման նպատակով Խորհրդային Հայաստան գործուղված ուսուցիչների խմբի հետ զալ հայրենիք: Ի վերջո, երկար, մի ամրող կյանք տևած բաժանումից հետո նա տեսնում է հարազատ մորը, քրոջն ու եղբորը: Տեսնում է հայրենիքի խորհրդանիշը՝ բիբլիական Արարատ լեռը.

Որ կը կապէ երկինքի ջինջ կապույտին  
Հայության աչքն ու հոգին...<sup>6</sup>

...Հայոց Սփյուռքում XX դարի 50–60-ական թվականներին սկսեց ահազնանալ ուժացման վտանգը: Ալեկոծվում էր զալթաշխարհը. նոր տեղաշարժեր, նոր վերազարդեր, նորանոր նահանջներ: Չուլման, կորստի նոր ճամփաներ էին ձգվում Արևելքից դեպի Արևմտուք, որ ցիրուցան եղող հայությանը սպառնում էին նոր՝ ճերմակ ջարդով: Արևելքից հեռանում էին հայերը դեպի Կանադա, Ամերիկա, Եվրոպա: Բազմապատկվում էին կորուստներն այդ անվերջ տեղաշարժի ճանապարհին, զալթի ու պանդիստության այդ նոր պտտահողմերի մեջ:

70-ական թվականների կեսերից Լիբանանում ծայր առած քաղաքացիական պատերազմը վերաճեց տարածաշրջանապինի՝ կործանման եզրին հասցնելով երկիրը: Այն կործանարար ազդեցություն գործեց նաև հայկական ամենակազմա-

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 29:

կերպված և կուռ համայնքի վրա՝ չշրջանցելով հարևան երկրների հայկական զա-  
դօջախները: Շուրջ հարյուր հազար լիրանանահայեր վերագաղթեցին տարբեր  
երկրներ: Նոսրացան դպրոցներն ու մամուլը, մշակութային կյանքը կաթվածա-  
հար եղավ: Լիրանանահայ գրողները (*Մուշեղ Իշխան, Անդրանիկ Ծառուկյան,*  
Վահե Վահյան, *Ժագ Հակոբյան, Սիրան Սեզան*), որոնք որդեգրել էին «Արքազան  
ժառանգի» իրավունքը, որպես ինքնապաշտպանական հակազդեցություն՝ փակ-  
վել իրենց տոհմիկ կաղապարի մեջ՝ չափազանց ողբերգականորեն ապրեցին հա-  
մայնքի քայլայման, տարագրման ու հուսահատության իրողությունը:

«Փարիզի տղաքը» (*Վազգեն Շուշանյան, Շահան Շահնուր, Նիկողոս Սարաֆ-  
յան, Հրաչ Զարդարյան, Միսաք Մանուչյան, Գեղամ Աթմաճյան, Բուզանդ Թոփիալ-  
յան*), որոնք ի սկզբանե որոշեցին «քայլ բռնել եվրոպականի հետ», գնալ սեփական  
ներաշխարհի, ինքնության ճանաչողության ճանապարհով՝ չափանիշ ընտրելով  
միայն բարձր արվեստը, մերժեցին «լաց ու կոծի գրականությունը»: Նրանց համար  
ուժացումը՝ ազգային արժեքների ու տեսակի կորուստը, արձանագրվեց որպես  
նահանջ, որը ամենաբնորոշ կերպով արտացոլվեց Շահնուրի «Նահանջ առանց  
երգի» վեպում: «Կը նահանջեն ծնողը, որդի, քեռի, փեսա, կը նահանջեն բարդ,  
ըմբռնում, բարոյական, սեր: Կը նահանջե լեզուն... Եվ մենք դեռ կը նահանջենք  
բանիկ և գործով, կամա և ակամա, զիտությամբ և անզիտությամբ»<sup>7</sup>: Իսկ Հակոբ  
Օշականն արդեն հստակ սահմանել էր Սփյուռքի ձուլման ուղիները: «Ամենեն ա-  
հավորը կործանման սա հեղաշրջումներուն մեջ պատկերն է երիտասարդության  
մը, որ կամչնա իր ժողովուրդեն, օտարին տրամադրելով ոչ միայն իր խելքը, բա-  
գուկը, այլև՝ իր պապերուն ամենեն նվիրական կտակը, իր արեան մյուսոնք, իր  
սերմը»<sup>8</sup>:

Ազգային մեծ տագնապի ահազանգը հնչեցնում է նաև *Մուշեղ Իշխանը*: Իր  
սերնդակից մտավորականների հետ բանաստեղծն ի սկզբանե բռնեց ազգապահ-  
պանության ջահը, ողջ կյանքն ապրեց հանուն հայապահպանության և ընդդեմ  
ուժացման: Նրա ստեղծագործությունը, մանկավարժական, իրապարակախոսա-  
կան ու քաղաքական գործունեությունը միտված է եղել օտար ափերում ազգային  
արժեքների, լեզվի և ինքնության պահպանմանը:

Երազի ու իրականության հակադրությունից, խանդակառ հույսերից ու հու-  
սալքությունից, արգասավոր հասունությունից ու իմաստուն տառապանքից  
ծնված *Մ. Իշխանի* բոլոր ժողովածուների հիմքում (*«Տուներուն երգը»*, *«Կրակ»*, *«Ե-  
րազ և կյանք»*, *«Ողջույն քեզ, կյանք»*, *«Տառապանք»*, *«Ուկի աշուն»*) Սփյուռքում  
ազգային ոգու, տեսակի ու լեզվի պահպանության գաղափարն է: Նրա քնարը  
հնչեցնում էր Սփյուռքի հավաքական ցավը:

«Տրովադայի ձին» հողվածում *Մ. Իշխանը* գրում է. «Մեր պաշտպանած հոգե-  
կան քերդի պարիսպները խոշոր ձեղքեր ստացած են: Տրովադայի ձին քերդեն  
ներս սահած է, մեր մեջ է արդեն: Ժամանակը է ահազանգը լսելու»<sup>9</sup>: Իսկ «Տրովա-  
դայի ձին» պայքարից, ցավից, դժբախտություններից հեռանա-

<sup>7</sup> Ը. Ը ա հ ն ո ւ ր. Երկեր, գիրք, Երևան, 1985, էջ 123-124:

<sup>8</sup> Հ. Օ շ ա կ ա ն ն. Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 10, Անթիլիս, 1982, էջ 459:

<sup>9</sup> Մ ո ւ շ է դ Ի շ ի ա ն. Տրովադայի ձին.-«Մարմար» (Պոլիս), 11. VII. 1969, էջ 2:

լու, փախչելու, չվելու նորից արթնացած բնազդն էր, թերևս: Հեռանում են, հեռանում են բոլորը, նույնիսկ նրանք, ովքեր երեկ պայքարում էին ու ազգապահպանության առաջամարտիկներն էին: Եվ կործանարարն այն է, որ նրանք հեռանում են արդեն նահանջած: Բանաստեղծի բարեկամը, երեկվա զաղափարակիցն այսօր լրում է ու թևաթափ հեռանում, նա այսպես է հեռանում. «Հիսուն տարի պայքարեցանք, հուսացինք, հուսադրեցինք, սպասեցինք և տեղ մը չհասանք: Ինչ որ կա և պիտի ըլլա այսուհետև՝ քաշըուք է, հոգեվարքի երկարաձգում: Արդ, ի նշ իրավունքով ես իմ զավակներուս ապագան խորտակեմ՝ հանուն դատի մը, որ հետզետե ավելի ու ավելի ցնորք կդառնա: Ուր ալ ըլլան՝ անոնք կորսված են ազգային տեսակետնեն: Տարիներու հարց է միայն»<sup>10</sup>:

Բանաստեղծը վստահ է, որ ինքն իրենից փախչող հայ մարդը նոր օտարության մեջ տառապելու է երկալի՝ մեկ հայ լինելու համար ու մեկ էլ հայ չլինելու համար: Ուրեմն նրա մեծ ցանկությունն էր, որ եթե մարդը անհրաժեշտաբար է հեռանում, պետք է հեռանա բնակավայրից և ոչ թե ինքն իրենից, իր անցյալից, իր հիշողությունից, իր արմատներից: Հայրերի մի այլ, անզիջում տեսակ տագնաապ է ապրում, որ իրենց շրջապատող խայտարդետ բարքերն արդեն ավերիչ ազդեցություն են գործել որդիների վրա, նրանց վզին ձգված է այևս «օտար զայթաքղություններու ոսկեցոթան»: «Բայց մենք որ մեր հայու իսկությունը պահելու գերագույն պատերազմը կը մղենք, մենք որ իբրև մարդ ապրելու և կյանքեն հաճույք զգալու համար իբրև հայ կուզենք շնչել, ընդունեցեք որ իրական ողբերգություններու առջև կը գտնվինք հաճախ: Ողբերգությունը հայ հոր, որ իր զավակի աչքերուն մեջ կնայի և հոն չի գտներ ինքզինք՝ իր հոգիին հայեցի պատկերով»<sup>11</sup>, – գրում է Սուշեղ Իշխանը:

Դեռ 1936 թ. իրատարակված «Տուներու երգը» ժողովածուում Սուշեղ իշխանը՝ իբրև եղեռնապուրծ հայության նոր աղոթք, հնչեցրեց իր հայունազործությունը, թե.

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,

Ուր կմտնե ամեն հայ, իբրև տանտեր հարազատ...

Հոն է միայն, որ կրնա գտնել ամեն հայ կրկին

Խաժամուժին մեջ օտար կորսնցուցած իր հոգին<sup>12</sup>:

Անչափելի կորուստների մեծ միսիթարություն: Ու մի՞թէ, մի՞թէ աշխարհասկյուր տնավեր լաձերն իրենք իրենց ձեռքով պիտի ավերեն վիրտուալ, Հոգենոր Հայաստանի միակ ու վերջին ամրոցը, տաճարը, տունը՝ Մայրենին: Յուրաքանչյուր հայ, որ մոռացության է մատնում մայրենի լեզուն, մի քար է պոկում ազգային ամրոցի, հայրենի տան պատից: Նա, ով զրկում է իր զավակներին հայերենից՝ քարը հանում է գոյության Հիմքից. այսպիսին է ազգի գոյաբանության՝ Սուշեղ Իշխանի կենսափիլիսոփայությունը:

<sup>10</sup> Նոյն տեղում:

<sup>11</sup> Նոյն տեղում:

<sup>12</sup> Մ. Ի շան ան Երկեր, Երևան, 1990, էջ 26:

Սակայն ուժացման բանաստեղծական տագնապի բարձրակետը եղավ նրա «Արևամար» ժողովածուն՝ տեղահան արված, բնավեր հայի ողբերգության մատյանը: 1986 թ. լույս տեսած այս ժողովածուն բաղկացած է բանաստեղծությունների Ա և Բ շարքերից: Առաջին շարքում ընդգրկված են պանդխոտությանն ու նրա հետևանքներին առնչվող և՝ քնարական, և՝ էպիկական պատումներով բանաստեղծություններ: Երկրորդ շարքը կազմող բանաստեղծությունները՝ մահվանը դեմ համդիման կանգնած բանաստեղծի փիլիսոփայական խոհերն ու բարդ, դրամատիկ ապրումներն են արտացոլում: Բանաստեղծական տագնապ ու ահազանգ է այս ժողովածուն: իր և իր սերնդի «արևամարը» մի թե հայի «արևամարն» է օտարության մեջ:

Դարասկզբին հայկական ջարդերից նորովի սկիզբ առած պանդխոտության կործանարար բնույթին իրենց հոգու խորում զգացին նախ՝ բանաստեղծները: Միամանքոն հնչեցրեց իր «Հայրենի հրավեր»-ը, Վարուժանը մորմորվեց հիվանդ ու մերնող պանդուխտի կայրոտով, Ռուբեն Սեակը դարձյալ դիմեց մեր պանդխոտության վկային: «Կոռու նկ, կոռու նկ, ամեն աշխարհի անկյուններե, ամեն սրտի խորշերէ քանի ծանր լուրեր կապեցին քու թներուդ, կոռու նկ, թնավոր հառաչ, որ կրնա ս թռչիլ»<sup>13</sup>: Երբ Հայոց Մեծ եղեռնի վերջին վկաների «արևամարն» էր մոտենում, դարավերջին, մեր մեծ ցավի, պանդխոտության նոր հեղեղատների ակունքի մոտ կանգնած Սփյուռքի հայ բանաստեղծը՝ Սուշեղ Իշխանն է դիմում կոռունկին: Ավա դ, օտար աշխարհի կոռունկն անտարբեր է, պանդուխտն՝ անհույս:

Ինչպէ՞ս իմ հոգիս ձայն տա հիմա քեզ՝  
«Կոռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս»:  
Դուն ոչ մեկ խապրիկ ունիս ինձ տալիք,  
Ոչ մեկ ավետիս ունիս տանելիք ...<sup>14</sup>

Եթե դարասկզբին երկրի ու ժողովրդի գոյության հարցականը մարմուտ էր բանաստեղծների մահվան տեսիլներում, «Մի թե վերջին...» ողբերգական հարցը դարակեսին հնչեց Սփյուռքում: Տարագիր բանաստեղծի՝ Մուշեղ Իշխանի շուրջերին ազգի, հայի գոյության դիման դառնում է սգերգ, մորմոր.

Հայր կարյունի,  
Հայր կհալի...  
Երկրի երեսին գնա ու գնա,  
Սփյուռքը վկա,  
Հայ կա ու չկա...<sup>15</sup>

Աշխարհի ամենակուլ խառնարաններում, պատմության նոր քառուղիներում Չարենցի բնորոշմամբ «անդեկ, ցաքուցրիկ, անգաղափար» կրկին տառապում է

<sup>13</sup> Ո. Ս և ա կ. Երկեր, Երևան, 1985, էջ 371:

<sup>14</sup> Ս. Ի շ և ա ն. Արևամար, Բեյրութ, 1986, էջ 8:

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 9:

հայր՝ անհանգրվան, անհող ու վտարանդի: «Հուտ կորուսյալ» բանաստեղծությունը պարզապես ողբերգական մարզարեւություն է:

Ճամբաներուն մեջ մոլոր  
Փուշ ու տատասկ բազմազգի  
Կառնեն կտոր առ կտոր  
Գեղմն իր արձաթ ու ոսկի...<sup>16</sup>

Հայ ոգու ու մշակույթի պահպանմանն իր կյանքը նվիրաբերած բանաստեղծը հեռավոր ճամփաների վրա կանգնած, անդարմանելի կոկիծ է ապրում՝ նայելով չվող նորանոր երամներին.

Հայու որդվոց տարագիր  
Ճամբան չունի հանգրվան.  
Մոոցած երդիր ու երկիր՝  
Անոնք կերթան ու կերթան.....<sup>17</sup>

Եթե իր առաջին՝ «Տուներու երգը» ժողովածուում Մուշեղ Իշխանը կերտում է տարագիր հայի ոգու տունը և հավատում է, որ այդ տան օջախը վառ է մնալու, ապա վերջին ժողովածուում՝ «Արևամարում», բանաստեղծը, ասես, ողբում է այդ տան ավերակների մոտ, որի կողքին բարձրանում են «սուտ տաճարները»:

XX դարավերջն էր, և Սփյուռքի անձայր տարածության մեջ նոսրանում էին եղեռնից փրկվածների շարքերը: Օստար միջավայրի ու բարքերի ազդեցությամբ սերնդափոխությունը գնալով ավելի դժվար էր ընթանում, ողբերգական տարերքի նման այն ոչնչացնում ու տրորում էր ազգային նվիրական արժեքները: Նոր սերնդի հարմարվողականությունն ու օստար բարքերին, մտածողությանը մերձենալը գուցեն ինչ-որ տեղ վերելք կամ ձեռքբերում էր համընդհանուր գոյապայրարում, բայց հայրերի ու զավակների մեջ գոյացրեց անդունդ, որը ծեր, մեռնող հայրերը սկսեցին լցնել կորսույան ցավ ու ափսոսի մի նոր ողբով: Մի թե վերադարձի դրները փակվելու են ընդմիշտ, և մի թե դրանք փակելու են անտարբեր, օստարալեզու ու հուսալրված որդիները:

«Չմնաց» բանաստեղծությունը, ասես, աստվածաշնչյան «Ունայնություն ունայնությանը» հնչեցնում է նոր իմաստով ու նոր հնչերանգով, նոր աշխարհընկալմամբ: Նրա համար անիմաստ ու դատարկ է կյանքն այլևս. դողդոց ծերունիներն ու մամիկները մեկ առ մեկ հանձնվեցին հողին, նորաբաց արեի տակ «պանդուխտի ափ չմնաց», որքան արագ խլեցին մեր արտ ու դաշտերի ծաղկած երազը ու «կարոսի կանչ չմնաց», մեր հողը խունկ էր ու աղբյուրների ջուրը՝ դեղ, բայց գերփած հոգիներում «աղբյուրի ձայն չմնաց», «արցունք ու ցավ չմնաց»՝ բաց վերքերի համար.

<sup>16</sup> Նոյն տեղում, էջ 10:

<sup>17</sup> Նոյն տեղում, էջ 11:

Ինչ որ լույս էր՝ դարձավ մութ,  
Ինչ որ հուշ էր՝ եղավ սուտ...  
Առատ զինի, առատ հաց,  
Ալ ափսոսանք չմնաց<sup>18</sup>...

Մենակ են նրանք, լքված կամ չհասկացված այդ ծերերը, որ օրորոցում եղեռն տեսան ու իրենց տարագիր կյանքն ապրեցին նավաբեկյալի պէս՝ փրփուրներից կառչելով: Մեկ-մեկ հեռանում են կյանքից, հեռանում են այն ցավալի զիտակցությամբ, որ դեռ պարտքն անկատար է, կամքն անտեսված, ծնող-հողը՝ գերության մեջ, ու նոր սերունդը՝ արմատին անծանոթ, քնած է մոռացության խորը քնով, երբ ամեն հայի հարկի տակ, հաց ու զինով առատ սեղանների վրա, կոկակոլայի բաժակների մեջ իւեղվում է Մասիսից «փրթած կտոր մը կարու», երբ՝

Խաչքարեր ծաղկող հայ հոգին անծիր  
Շվար, մոլորուն,  
Կերթա ծովե ծով ու երկրե երկիր  
Նոր տեսիլքներու կարուով թաքուն...<sup>19</sup>

Քնարական հերոսին՝ տարագիր պանդուխտին, դեռ ավելի ուժեղ հարվածներ են սպասվում, նրա թոռնիկի՝ «սիրական ձագուկի» շուրթերից ընկնում ու փշրկում են հայերեն «ոգեվար բառերը»: Ինչպէ՞ս նրա մեջ արթնացնի նախնաց ողին, արյան կանչը, և ծերունին երգում է Կոմիտասի երգերը՝ «Կոռունկ», «Գարուն ա», «Ծիրանի ծառ» ու սիրտ խոցող պատասխան՝ յարթաղանի հարվածից կը ուժեղ (*«Ես չեմ սիրեր Կոմիտաս»*).

Հսավ՝ «Պապի՝ կը մոռնա՞ս,  
Ես չեմ սիրեր Կոմիտաս,  
Ես կը սիրեմ ոռքըն ոռլ,  
Երգիչներու թագավոր  
Կրակ ու բոց կյանքով լի  
Կուզեմ Էլվիս Փրեսլի...»<sup>20</sup>

Եվ բանաստեղծի վիրավոր հոգուց հորդում է իմաստուն պատզամը, որը և՝ խորհուրդ է, և՝ խրատ, և՝ կտակ, և՝ վերջապես, անհերքելի ու հավիտենական ճշմարտությունն. ուրիշի հողի վրա շինած տունը «հող է միայն, քար ու կիր», տնկած ծառը չի տա կյանքի հովանին, վառած լույսը՝ «ցնորք է լոկ ոսկեծիր», սերը՝ չի տաքացնում հոգին.

Եվ հողին մեջ ուրիշին

<sup>18</sup> U. Ի շատ ան Արեամար, էջ 16:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 29:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 35:

Քու ոսկորներդ անտեր  
Յուրտեն հավետ կմսին...<sup>21</sup>

*Մուշեղ Իշխանի ստեղծագործություններն ի սկզբանե հարազատորեն արտացոլում էին Սփյուռքի իր սերնդակիցների զգացմունքներն ու երազները։ Եվ նրա ցավազին կարապի երգը, նրա ապրած ողբերգության վերջին արարը՝ «Արևամարը» բանաստեղծի ներաշխարհում հավատի ու հուսալքման վերջին կոփկն էր, ազգային ինքնության, լեզվի կորստի դեմ նրա վերջին բողոքը։*

Սփյուռքահայության ձևավանական ուսուուրվել է նաև *Մուշեղ Իշխանի դրամատիկական ստեղծագործություններում՝ «Մեռնիլը որքան դժվար է», «Կիլիկիո արքան», «Պարույր Հայկազն և Սովուս Խորենացի» թատերգություններում։ Ազգային արժեքների և ինքնության պահապան սփյուռքահայի իր կենսափիլխոփայությունն առավել արտահայտիչ նա արտացոլել է։ Պարույր Հայկազն և Սովուս Խորենացի» թատերախաղի վերջին արարում, որտեղ հովեկների խմբավարի շուրթերից սփյուռքահայ բանաստեղծը հնչեցնում է հայ ժողովրդի իրական արժեքների, նրա մշակույթի հավերժության գոյաքանությունը. ի՞նչ է մնացել բոլոր այն հայորդիներից, որոնք իրենց հանճարի լուսը օտարին են տվել։ Ի՞նչ է մնացել բյուզանդական զահին ծառայած հայ գործիչներից և Պարույր Հայկազնի նման հանճարեղ ձարտասանից, որի մասին շատերը նույնիսկ չեն լսել։ Հոռմում նա վայելում էր տիեզերական հռչակ, այնտեղ կանգնեցրել էին նրա արձանը։ Օտարը իւլեց նրա ամրող ունեցածը՝ և՝ հանճարը, և՝ հոգին։ Մեր պատմազիրներից ոչ ոք չի խոսում նրա մասին։ Պարույրը պարզապես դարձավ Պրոսերիոս։ «Եվ որովհետև նրա արձանը իրեն պատվանդան չունեցավ հայ ազգի սիրտը, տապալվեց, փոշիացավ, և անհետացավ Հոռմի փլատակների տակ։ Մինչդեռ, տեսնու և եք, դարեր է նվաճել համեստ մի հայ վանական՝ Սովուս Խորենացի, որ իր կյանքը և հանճարը նվիրաբերեց հարազատ ժողովրդին։ Տասնինգ դարերի անցյալից շարունակում է հնչել նրա ձայնը։ Մտիկ ըրեք ձեր հոգիներու մեջ ...»<sup>22</sup>։*

Այս պատմական թատերախաղում Պարույրի կերպարն իր մեջ մարմնավորում է բոլոր նրանց, ովքեր մերժում են իրենց ծագումը, չեն գիտակցում կամ ընդունում իրենց ազգային ինքնությունը, ապրում են միայն հանուն փառքի ու անձնական բարեկեցության։ Սակայն պատմությունը, մարդկային հիշողությունն արձանագրում է փառասեր այդ մարդկանց համար ամենաադան դատավճիռը՝ մոռացում։ Փոխարենը Սփյուռքի հայապահպանության նվիրյալը՝ Մուշեղ Իշխանը, ազգային զաղափարաբանության հիմքում որպես օրինակ դնում է նրբազգաց պատմիչը՝ Սովուս Խորենացու կերպարը։ Քերթողահայրը ուղենշում է նեղ ու դժվարին ձանապարհը, որը, սակայն, տանում է դեպի սեփական անցյալի ձշմարիտ արժնորում և այն Հայաստանը, որտեղ կկառավարեն իմաստասեր ու ազգանվեր այրերը։

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 37։

<sup>22</sup> Մ. Ի շ իւ ա ն. Թատերախաղեր, 1980, Բեյրութ, էջ 233։

Բանաստեղծը խորապես զիտակցում է, որ Սփյուռքը բարդ, հարահու ու անձանաչելի, բազմաշերտ և բազմադեմ իրողություն է: Բայց «Ի՞նչ ըրավ Սփյուռքը իր բանաստեղծության: Ինք ի՞նչ ըրավ Սփյուռքին: Ի՞նչ է իր գործին պատմական կարևորությունը - որուն մեջ է որ կապահովվի բանաստեղծի մը հարատևությունը: Մուշեղ Իշխանի պատմությունը իր ժամանակի պատմությունն է... և այդ ժամանակը չկրնար հասկցվիլ առանց իրեն»<sup>23</sup>, – գրում է սփյուռքահայ բանաստեղծուհի Վեհանուշ Թեքեյանը:

### МУШЕГ ИШХАН – НОСИТЕЛЬ СОХРАНЕНИЯ НАЦИОНАЛЬНОГО ДУХА

ЭВЕЛИНА БАГДАСАРЯН

Р е з ю м е

Писатель, педагог, представитель западно-армянской диаспоры Мушег Ишхан (1914–1990) своими произведениями и общественной деятельностью в диаспоре боролся за сохранение армянского языка, армянской идентичности, ее облика и своеобразия. В его публицистических статьях, в поэтическом сборнике “Аревамар”, в драме “Паруйр Айказн и Мовсес Хоренаци” звучит большая тревога по поводу национального отчуждения. С годами редеют ряды спасшихся от геноцида, углубляется пропасть между родителями и детьми. На “закате” своей жизни поэт оставляет молодежи, отрекающейся от своих национальных ценностей, единственный верный завет: вслушайтесь в глубину своей души и вы найдете там подлинный свет, которым тысячелетиями руководствовался наш народ. Вместе с единомышленниками своего поколения он поднял факел национального самосохранения, вся жизнь его была борьбой за утверждение армянства и против его ассимиляции.

### MUSHEGH ISHKHAN. THE DEVOTEE OF ARMENIAN IDENTITY

EVELINA BAGHDASSARYAN

S u m m a r y

Poet, pedagogue and representative of Western Armenian Diaspora Mushegh Ishkhan (1914–1990) has fought for the preservation of the Armenian language, national identity, type and image through his poetry. The poet sounds the alarm of assimilation through his articles, the “Arevamar” collection of poems, in the drama “Paruyr Haykazn and Movses Khorenatsi” and other works. The gap between fathers and sons grows deeper with the fall of the number of survivors of the Armenian Genocide. The only true message that the poet leaves to the sons who are alienated and neglect national values is to look deep inside their souls and find the light that has guided our people throughout millennia. Along with the fellow poets of his time, Mushegh Ishkhan was the torchbearer of national preservation. Ishkhan dedicated his life to the fight for national preservation and against its assimilation.

<sup>23</sup> Կ. Թ ե ք յ ա ս ն. Մուշեղ Իշխան՝ մրգաստանին լիություն. – «Գարուն», 1994, № 2, էջ 57: